ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արայիկ Հարությունյան

2.Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3.Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ, 2019 թվականի նոյեմբերի 12-14-ը

4.Հրավիրող կողմը

ՅՈՒՆԵՍԿՕ

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 40-րդ նստաշրջանին

6.Քննարկված թեմաները

- Դպրոցը ծայրահեղականության, խավարամտության և անհանդուրժողականության դեմ. հաջողությունների և անհաջողությունների միջև ինչպիսի ռազմավարություն որդեգրել արդյունավետ կանխարգելման համար.
- երիտասարդության գլոբալ համագործակցություն, որոշումների կայացման գործընթացում երիտասարդներին ներգրավելու նոր ուղիների բացահայտում.
- փոխադարձ հարգանքի և «մտավոր ու բարոյական համերաշխության» խթանում, ինչպես նախատեսված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանադրության մեջ:
- պարտավորություններ գլոբալ համագործակցության և միջազգային երկխոսության խթանման համար.

7. Հանդիպումները

Հանդիպումներ տեղի ունեցան ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթական հարցերով տեղակալ տիկին Ստեֆանիա Ջիաննինի, Շոայի հիշողության կազմակերպության նախագահ, Ալադին նախագծի համահիմնադիր և փոխնախագահ Էրիկ Ռոտշիլդի,Ֆրանսիայի Ազգային կրթության և երիտասարդության նախարար Ժան Միշել Բլանկենի, Ֆրանսիայի նախկին վարչապետ Ժան Պիեռ Ռաֆարենի, մասնակից պետությունների կրթության նախարարների, հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

8. Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 40-րդ նստաշրջանին հանդես եմ եկել ելույթով, որում արժևորել եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենսական դերը կրթության միջոցով խաղաղություն սերմանելու և ծայրահեղականությունը կանխարգելելու գործում և ընդգծել, որ դպրոցը և այլ կրթական հաստատություններ այսօր կարող են գործիք ծառայել ատելություն սերմանելու համար՝ որպես օրինակ բերելով հարևան Ադրբեջանին, որտեղ դասագրքերում հայերը ներկայացվում են որպես իրենց գենետիկ թշնամիներ:

Կարևորել եմ կրթության դերը փոխըմբռնման և հարգանքի խթանման, աղքատության հաղթահարման, գիտության զարգացման և առաջընթացի գործում՝ նշելով, որ այն կարող է օգտագործվել նաև սխալ նպատակների համար, որոնք դեմ են և չեն համապատասխանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ-ի արժեքներին: Ավելին՝ այն կարող է օգտագործվել խտրականությունը, այլատյացությունը, ռասիզմը, հակասեմականությունը, իսլամոֆոբիան և նույնիսկ ցեղասպանության և պատերազմի հանցագործությունները հրահրելու կամ կանխարգելելու համար: Փաստել եմ, որ այս հիմնախնդիրն առավել քան կարևոր է ծայրահեղականության բոլոր դրսևորումների դեմ պայքարում՝ միջազգային հանրության ներկայիս ջանքերի համատեքստում:

Համոզմունք եմ հայտնել, որ կրթությունը վահան է մարդու իրավունքների ոտնահարման, մարդկության հանդեպ ոճրագործությունների և ցեղասպանության կանխարգելման համար: Նա մանրամասն ներկայացրել է Հայաստանի հանձնառությունը՝ կրթության միջոցով նպաստելու միջմշակութային, միջկրոնական և ազգամիջյան երկխոսությանը:Կրթությունը յուրաքանչյուր հասարակության զարգացման շարժիչ ուժն է: Մենք հավատում ենք, որ կրթության միջոցով հնարավոր է կանխել ցեղասպանության ոճիրն ու մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները: Ցեղասպանությունների կանխարգելման համար Հայաստանի ներկայացրած ՄԱԿ-ի բանաձևի հիմնական բաղադրիչներից մեկը կրթությունն է: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան և Մարդու իրավունքների խորհուրդն ընդունել են այդ բանաձևը:

Նշել եմ, որ պատերազմների և զինված հակամարտությունների պատճառով ոտնահարվել են շատերի հիմնարար իրավունքները: Ցավոք, մեր տարածաշրջանն այդ առումով բացառություն չէ: Մենք միացյալ հանձնառություն ունենք Կայուն զարգացման նպատակների 2030թ համատեքստում, որը խոստանում է՝ ոչ ոք չի անտեսվելու, և նպատակին հասնելու մեր քայլերը պետք է համահունչ լինեն այս տրամաբանությանը: Արցախի ժողովուրդն ունի քաղաքական, տնտեսական, կրթական և մշակութային ազատ զարգացման անքակտելի իրավունք, և Հայաստանն աջակցում է Արցախի ժողովրդին:

Հայաստանի կառավարությունը կրթության բնագավառում կարևորում է նաև նորարարական տեխնոլոգիաների զարգացումը: Բոլորովին վերջերս Հայաստանում անցկացվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսը (WCIT): Մեր երկրում գործող մի շարք կազմակերպություններ լուրջ հաջողություններ են արձանագրել տեղեկատվական տեխնոլոգիաների և արհեստական բանականության ոլորտներում:

Լինելով տարբեր քաղաքակրթությունների կենտրոնում՝ Հայաստանը խորն արմատավորված ավանդույթներ ունի համակեցության և մյուսների մշակույթն ու կրոնը հարգելու առումով: Սա է պատճառը, որ Հայաստանը պահպանում է իր հարուստ մշակութային ժառանգությունը, որն ընդգրկում է, օրինակ, հելլենիստական շրջանի տաճար, տարբեր քրիստոնեական ուղղությունների հնագույն եկեղեցիներ, միջնադարյան հրեական գերեզմանատուն, 18-րդ դարի իրանական մզկիթ և աշխարհի ամենամեծ եզդիական տաճարը:

Դժբախտաբար, նույնիսկ խաղաղ պայմաններում էթնիկական կամ կրոնական անհանդուրժողականության պատճառով մշակութային ժառանգության շատ արժեքներ են ոչնչացվել: Այդպիսի արժեքներից են Ջուղայի միջնադարյան խաչքարերը Նախիջևանում, որոնք իմ ժողովրդի մշակութային ժառանգության մի մասն են:

Մեր օրերում, երբ ծայրահեղականությունը և անհանդուրժողականությունը աննախադեպ աճ են գրանցել, պետք է ավելի քան գնահատենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի դերը հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի և մշակութային երկխոսության արժեքների տարածման գործում:

Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը բացառապես խաղաղ ու ժողովրդավարական վերափոխում էր՝ հիմնված համամարդկային և ազգային արժեքների վրա: Այն լավագույնս արտահայտում է միասնականությունը, խաղաղությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքների գերակայությունը:

Հայաստանի Հանրապետությունը վստահ է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ին յուրահատուկ առաքելություն է վերապահված, և մենք պատրաստ ենք ներդնել մեր գիտելիքներն ու նորարարական գաղափարներն այդ կարևոր նպատակներին հասնելու գործում:

9. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները:

Բարձրագույն կրթության ոլորտում ներառման և շարժունության վերաբերյալ Նախարարների հանդիպման հիմնական նպատակն էր աջակցել որոշումների կայացմանը՝ հօգուտ ներառման և շարժունության, ինչպես նաև իրազեկ բանավեճի միջոցով նպաստել բարձրագույն կրթության ոլորտում քաղաքական կամքի, միջազգային համագործակցության և կարողությունների ամրապնդմանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2030-ի օրակարգի շրջանակներում:

Ընդունվեցին եզրակացություններ բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման վերաբերյալ գլոբալ կոնվենցիայի վավերացման վերաբերյալ, ինչպես նաև միգրանտների, փախստականների և ներքին տեղահանված անձանց համար ներառական, որակյալ բարձրագույն կրթություն ապահովելու վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

19.11.2019